Վախթանգ Անանյան

Հավատարիմ ընկերս

1

Հրացանը ձեռքիս պատրաստ բռնած իջնում եմ բլրի քարքարոտ լանջով:
Ներքևում փռված է կապուտակ ու ծիծաղուն Այոր լիճը:
Եղեգնուտում բադեր երևացին: Սկսեցի զգուշությամբ առաջ գնալ, բայց Զանգին՝ իմ
որսի շունը՝ ինձ մատնեց. բադերն իսկույն հասկացան, որ ես որսկան եմ: Հենց որ
հրացանս մեկնեցի՝ ճղճղոցով թռան: Բայց ո՜ւր պիտի փախչեն. կոտորակը հասավ
նրանց ետևից և բադերից մէկը մնաց ջրի երեսին ու թևերը թափահարելով սկսեց
տարուբերվել:
Զանգին թեև շատ փոքր էր ու դեռ կարգին լողալ չգիտեր, բայց ուրախության կլանչներ
արձակեց և ջուրը նետվեց:
Զա՛նգի, Զա՛նգի...
Բայց նա ուշադրություն չդարձրեց ու սկսեց լողալ, դունչը ջրից վեր ցցած: Ափին մի
նավակ կար, նստեցի ու թիավարեցի:
Զա՛նգի, դե՛սը, Զա՛նգի, կանչում եմ ես: Ուզում եմ հասկացնել, որ դեպի իմ կողմը
լողա: Բայց նա ջրի հետ կռվելով դեպի բադն է շարժվում:
Երբ ես մոտեցա, շունն արդեն վերջին ուժերն սպառած՝ սուզվեց ջրի տակ... Բադը
փռված էր երկու-երեք քայլաչափ նրանից հեռու: Ափսոսացի կորուստիս համար

և
գլխիկոր նստեցի նավակի հատակին: Հենց այդ վայրկյանին Զանգին երևաց ջրի երեսին, ղլղլացրեց, վերջին անգամ թույլ-թույլ շարժեց ոտներն ու հասնելով բադին,
բերանով բռնեց նրա ոտներից: Բադն իր թեթև փետուրներով իմ թեթև շանը կարող էր
մի պահ լճի երեսին պահել, բայց ջուրն սկսեց լցվել նրա բաց բերանը: Նա խեղդվելով
սկսեց ցած իջնել և բադն էլ հետը ջրի խորքը քաշել:
Ես այնպես ուժեղ թիավարեցի, որ նավակը ոստնեց և ջուրն արագ պատռելով շանը
հասավ այն ժամանակ, երբ միայն բադի գլուխն էր երևում: Բռնեցի թռչնի կտուցից ու
կամաց վեր քաշեցի: Զանգին բերանից օդի պղպջակներ արձակելով, դեռ ամուր կախված էր բադի ոտներից:
Երբ իմ որսը ջրից հանեցի, դուրս եկավ նաև Զանգիի գլուխը: Լոշտակ ականջներից
վեր քաշեցի ու պառկեցրի նավակի հատակին: Նա աչքերը խփած արագ-արագ շնչում
էր:
Էլեկտրական ջրհանում աշխատող բանվորները աղմուկով դէպքի վայրը հասան,
Զանգիին ափ հանեցին, կախեցին գլխի վրա, ջուրը քչքչալով սկսեց փորից դուրս թափվել:
Փրկվե՛ց, էլ բան չկա, հուսադրեց ինձ ջրհան կայանի վարպետ Սամսոնը:
Շունն սկսեց դողալ, ծնոտները կափկափում էին: Ես նույնպես ամբողջովին թրջված
էի:
Տղե՛րք, մի թեժ կրակ արեք, կարգադրեց վարպետ Սամսոնն ու բադը վերցնելով, հարցրեց.
Հը՞, բմբուլը քամուն չտա՞նք...
Խնդրեմ, պատասխանեցի ես ու սկսեցի շորերս մզել:
Թեժ կրակի մոտ նստած ես չորացնում էի շորերս ու մտածում, թե ի՞նչ համառ

որսորդ
է այս կենդանին, կյանքը կտա, բայց որսը ձեռքից բաց չի թողնի...
Բայց հաջորդ օրը պարզվեց, որ Զանգին ոչ միայն լավ որսորդ է, այլև լավ ընկեր:
2
Լույսը նոր էր բացվել, երբ վարպետ Սամսոնը ձայն տվեց.
Քաղաքացի ախպեր, ճաշ դառավ, վեր կաց...
Էնիկ օրդկները երազում կփրթի, ծաղրեց գյումրեցի մի բանվոր:
Վեր թռա, հագնվեցի ու Զանգիի հետ դուրս եկանք բարաքից: Տաք աղբյուրների ակունքներում, գետի ափերին, վայրի բադերը եռանդուն ետ էին տալիս տիղմը, քրքրում էին մամուռներն ու կեր ճարում:
Ձկնկուլը երբեմն թափով խփում էր ջրին, վայրկենապէս դուրս բերում ձկնիկն ու փայլեցնում արեգակի առաջին շողերի տակ:
Եղեգնուտներում վայրի թռչունները ճղճղոց էին բարձրացրել:
Քրդական խրճիթների արանքով մոտենում եմ գետին:
Պատանի հովիվը, որ շվշվացնելով, չարաճճի այծերին հայհոյելով, ֆերմայի հոտը
դուրս էր անում գոմից, ինձ նկատեց ու զարմացած նայեց:
Ինչ ես կուչ-կուչ անում, տո՛, հարցրեց նա քրդերեն:
Ձեռքով նշան արի. լռեց ու սկսեց հետաքրքրությամբ նայել:
Հասա մի քարի, կուչ եկա նրա հետևում և հարմար առիթի էի սպասում կրակելու:
Խելացի շունը փորսող տալով առաջ եկավ, թաք կացավ ոտներիս մոտ և սկսեց անհամբերությամբ մեկ բադերին, մեկ ինձ նայել:
Հրացանը մեկնեցի ու հենց ուզում էի կրակել, մէկ էլ հետևիցս դղրդյուն լսվեց. դինամիտով ժայռ պայթեցրին: Աղբյուրներից, եղեգնուտներից ու գետի կողյակներից
բադերը սարսափահար թռան և օդը լցրին աղմուկով:
Կրակեցի:
Երկու բադ ցած ընկան, մեկը՝ եղեգնուտը, մյուսը՝ ուղղակի գետի մեջ:
Զանգին վազեց եղեգնուտի կողմը: Երևի գետի միջինը արդեն մերն էր համարում, չէր
ուզում մյուսը ձեռքից բաց թողնել:
Բադը շատ մոտ էր ափից. կռացա. հրացանս մեկնեցի՝ չհասավ:

Քիչ էլ առաջ գնացի, կանգնեցի մի փոքրիկ քարի, հրացանիս ծայրը հասցրի բադին և
հենց իրանս մի քիչ առաջ մեկնեցի, քարը խրվեց ցեխի մէջ, և ես, կորցնելով հավասարակշռությունս՝ ջուրն ընկա:
Էլ չիմացա ինչ եղավ: Հիշում եմ, որ բերանս լցվեց ջրով ու սկսեցի ոլոլացնելով արագ
իջնել խոր հատակն ու հեռանալ ափից:
Զգացի, որ մեկն ուսիցս բռնեց ու վեր քաշեց: Ձեռքերս ու ոտքերս ուժեղ շարժեցի, դուրս եկա ջրի երեսը. Զանգին է, ատամները խրել է շորերիս մեջ ու դեպի ափ է քաշում ինձ:
Խեղճը փոքր էր, շուտ հոգնեց, բայց մի քայլաչափ մոտեցրեց ափին:
Լողալ չգիտեի, շորերս թրջվել ու խիստ ծանրացել էին: Նորից իջա ջրի տակ և ինձ
հետ ցած տարա իմ խեղճ Զանգիին: Նա սկսեց խեղդվել, բայց ինձ բաց չթողեց, իսկ ես
նրան ցած էի տանում իմ ահագին ծանրությամբ: Խեղդվում եմ, բայց հրացանը պինդ
պահել եմ ձեռքիս:
Մէկ էլ զգացի, որ շունը ինձ բաց թողեց ու բարձրացավ ջրի երեսը: Հետո իմացա, որ
բռնել է հրացանի փոկից ու սկսել է լողալ դեպի ափ:
Նա արդեն ամուր հողի վրա կանգնած, ինչքան ուժ ուներ, քաշում էր փոկից: Ոտներով
մի անգամ էլ խփեցի ջրին և հասնելով ափ, ուժասպառ ընկա տիղմի վրա: Շունը վազեց դեպի մոտակա տունը և դռան առաջ սկսեց հաչել:
Չանցած մի քանի րոպե, Զանգին վազելով վերադարձավ, իսկ նրա ետևից՝ հովիվ
պատանին, որն ինձ տեսնելով սկսեց գոչել.
Մստո՛, կո՛ւռ որե՛, կուռռ որե՛...
Մստոն նրա ընկերներից էր: Նրանք ինձ տարան ֆերմայի հովիվներին հատկացված
բնակարանը: Զանգին վազեց գետափ ու բերեց սպանված բադը:
Հավաքվեցին ֆերմայի աշխատողները, մեկը կրակ վառեց, մյուսը՝ թաղիք փռեց

գետնին:
Ինձ պառկեցրին թաղիքի վրա, ապա փորս տնտղելուց հետո մի հասակավոր քուրդ
գոչեց.
Տղան տկճոր է դարձել, գլխի վրա կախեցեք:
Կախեցին՝ ինչպես երեկ Զանգիին էինք կախել, և փորիս ջուրը դատարկվեց:
Երբ մի քիչ ուշքի եկա, գրկեցի իմ հավատարիմ ընկերոջ գլուխը: Նա հասկացավ,
ձեռքերս լիզում էր և մտերմաբար շարժում պոչը:
Եկավ և վարպետ Սամսոնը, թավ բեղերի տակ ժպտաց ու նկատեց.
Հը՛, մեր տղա, քեֆդ լավ չի երևում:
Ապա շոյեց շանս գլուխն ու մտախոհ՝ ասաց.